



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում / վերլուծություն /

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 155543 գործարքներ, որոնց քանակը, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 8.2%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 42247 օտարման գործարքների 76.5%-ը կազմել են առուվաճառքները, 22.8%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 39.6%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 2.6%-ով: 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 12526 առուվաճառքի գործարքների 60.1%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 9.8%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	11 ամիս 2011թ.	11 ամիս 2012թ.
Կենտրոն	442600	411100
Արաբկիր	344200	340600
Քանաքեռ-Զեյթուն	266100	268000
Նոր-Նորք	226300	231300
Ավան	238400	240800
Էրեբունի	234000	237300
Շենգավիթ	230600	237000
Դավթաշեն	257600	261200
Աջափնյակ	224300	228500
Մալաթիա-Սեբաստիա	222500	226400
Նուբարաշեն	146100	140700
Միջինը Երևանում	257500	256600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 0.3%-ով

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3930 բնակարաններ, որոնց քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.8%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		11 ամիս 2011թ.	11 ամիս 2012թ.
Արագածոտն	Աշտարակ	129700	111400
	Ապարան	50100	49400
	Թալին	61900	61200
Արարատ	Արտաշատ	96100	92100
	Մասիս	119800	108700
	Վեդի	93200	96900
	Արարատ	81100	73100
Արմավիր	Վաղարշապատ	143600	151700
	Արմավիր	119400	117500
	Մեծամոր	81900	86000
Գեղարքունիք	Սևան	90400	97900
	Գավառ	51100	53300
	Մարտունի	90700	105000
	Վարդենիս	34100	35600
	Ճամբարակ	23300	22300
Լոռի	Վանաձոր	89400	85700
	Ստեփանավան	68200	74300
	Սպիտակ	90300	99900
	Ալավերդի	35800	50900
	Տաշիր	43300	42300
	Թումանյան	11400	11100
	Շամլուղ	7600	8000
	Ախթալա	19300	19600
Կոտայք	Աբովյան	141600	151600
	Նոր Հաճն	125500	128200
	Բյուրեղավան	105100	107000
	Եղվարդ	108400	108600
	Հրազդան	60200	59100
	Ծաղկաձոր	188500	293400
Շիրակ	Զարենցավան	74700	83400
	Գյումրի	107600	107000
	Արթիկ	64000	64300
	Մարալիկ	34100	36400
	Գորիս	127600	115200
	Կապան	100600	89400
Սյունիք	Սիսիան	87300	81500
	Մեղրի	68800	68500
	Ագարակ	40000	41700
	Քաջարան	67100	95800
	Դաստակերտ	8000	8000
	Վայք	78300	84800
	Եղեգնաձոր	109800	118300
Տավուշ	Զերմուկ	119700	100300
	Դիլիջան	104800	103000
	Իջևան	126100	112900
	Բերդ	48600	51000
	Նոյեմբերյան	39600	41800
	Այրում	28100	25000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 3.5%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4420 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1264, մարզերում միասին վերցրած՝ 3156: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.4%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 5.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել՝ 7.9%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/	
	11 ամիս 2011թ.	11 ամիս 2012թ.
Կենտրոն	462800	462900
Արաբկիր	372900	369500
Քանաքեռ Զեյթուն	277800	279900
Նորք Մարաշ	286600	306300
Ավան	246200	257900
Էրեբունի	239700	226600
Շենգավիթ	241500	244200
Դավթաշեն	270700	262500
Աջափնյակ	237300	238900
Մալաթիա Սեբաստիա	232700	226300
Նուբարաշեն	149100	144800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	274300	274500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը,/ 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 0.1 %-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		11 ամիս 2011թ.	11 ամիս 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	135200	132500
	Ապարան	52000	53600
	Թալին	63100	69000
Արարատ	Արտաշատ	103400	98700
	Մասիս	124300	111900
	Վեդի	96500	100100
	Արարատ	86100	87400
Արմավիր	Վաղարշապատ	162100	149900
	Արմավիր	123500	103300
Գեղարքունիք	Սևան	95000	92700
	Գավառ	52300	50500
	Մարտունի	92300	92100
	Վարդենիս	37400	34500
	Ճամբարակ	25900	26300
Լոռի	Վանաձոր	98900	96700
	Ստեփանավան	70400	87400
	Սպիտակ	96600	112600
	Ալավերդի	37200	45600
	Տաշիր	46900	50600
	Թումանյան	12700	12100
	Շամլուղ	9600	13200
	Ախթալա	21000	29500
Կոտայք	Արուսյան	151100	150700
	Նոր Հաճն	132100	129100
	Բյուրեղավան	108400	120000
	Եղվարդ	114300	115300
	Հրազդան	64800	78600
	Ծաղկաձոր	311600	304500
	Չարենցավան	77000	79900
Շիրակ	Գյումրի	118900	116700
	Արթիկ	65900	61000
	Մարալիկ	36100	48700
Սյունիք	Գորիս	134800	127000
	Կապան	104300	98100
	Սիսիան	89700	89100
	Մեղրի	70300	76000
	Ագարակ	41200	46100
	Դաստակերտ	10500	11600
Վայոց ձոր	Վայք	80200	83400
	Եղեգնաձոր	115900	112000
	Ջերմուկ	122100	120900
Տավուշ	Դիլիջան	108200	106200
	Իջևան	134000	120700
	Բերդ	50800	58000
	Նոյեմբերյան	41500	46000
	Այրում	29600	34400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. հունվար-նոյեմբեր

ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 13719 միավոր /7973.14 հա/ հողեր, որից Երևանում՝ 1146 միավոր /239.71 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7039 միավոր /7164.54 հա/, որից Երևանում՝ 61 միավոր /9.96 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 4787 միավոր /442.88 հա/, որից Երևանում՝ 638 միավոր /50.62 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1612 միավոր /204.91 հա/, որից Երևանում՝ 426 միավոր /144.20 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 149 միավոր /94.02 հա/, որից Երևանում՝ 21 միավոր /34.93 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 66 միավոր /23.75 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 62 միավոր /19.56 հա/,
- ջրային հողեր՝ 4 միավոր /23.47 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 11794 միավորի /7101.80 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 901 միավոր /217.98 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1825 միավոր /857.15 հա/, որից Երևանում՝ 236 միավոր /21.55 հա/ և գործարքներ՝ 100 միավոր /14.19 հա/, որից Երևանում՝ 9 միավոր /0.19 հա/:

Հանրապետությունում 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 4.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 13.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 1630.65 հա, որից 1591.18 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 19.7%-ը կամ 2327 գործարքներ /993.95 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 191 միավոր /20.42 հա/, իսկ 79.5%-ը կամ 9381 միավորը /5982.87 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 696 միավոր /196.67 հա/: 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 86 գործարք /124.98 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող																			
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի				Կյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի				հասարակական կառուցապատ. հողերի			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	1	0.01	66	3.67	124	16.73	41	4.91	20	34.92	393	35.58	242	121.27												
Արագածոտն	95	138.90	15	2.08	7	0.52	34	3.19	635	1452.28	1	0.14	259	30.49	26	2.23												
Արարատ	90	164.33	10	1.96	93	8.50	76	1.84	882	571.42	10	12.17	512	43.78	44	2.37												
Արմավիր	62	117.93	8	1.38	16	2.02	48	0.83	800	1318.66	5	8.91	583	62.93	30	1.27												
Գեղարքունիք	26	13.15	6	1.36	76	6.65	74	6.68	1023	461.56	2	1.98	183	22.91	22	2.28												
Լոռի	16	4.77	8	0.84	45	1.84	94	3.73	459	421.84	1	1.50	194	21.89	51	1.40												
Կոտայք	165	253.70	10	7.21	338	24.68	164	4.72	872	569.39	16	9.52	837	69.97	99	6.41												
Շիրակ	8	11.92	6	1.28	52	1.22	90	3.19	271	256.16	2	1.02	92	8.36	28	1.50												
Սյունիք	20	67.20	3	4.27	18	3.04	26	1.48	179	246.90	3	0.32	90	7.98	17	1.02												
Վայոց Ձոր	48	67.49	4	0.18	26	1.23	57	1.10	115	73.03	0	0.00	47	4.35	18	0.26												
Տավուշ	22	16.56	12	1.22	49	6.42	57	3.53	122	66.35	2	0.60	84	8.30	18	1.18												
Ընդամենը	552	855.95	83	21.79	786	59.79	844	47.02	5399	5442.50	62	71.08	3274	316.54	595	141.19												

Ստորև ներկայացվում է 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք																			
	Ընդամենը				Արդյունաբ. օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Ընդամենը				Կյուղ. նշանակության հողերի				Արդյունաբ. օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի և հասարակական կառու.			
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	93	11.24	1	0.01	26	1.23	66	10.00	98	9.19	0	0.00	0	0.00	40	2.45	58	6.74										
Արագածոտն	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	148	144.59	94	138.81	15	2.08	7	0.52	32	3.18										
Արարատ	5	0.04	1	0.02	1	0.01	3	0.01	259	175.57	85	163.32	9	1.94	92	8.49	73	1.82										
Արմավիր	21	0.44	2	0.06	4	0.19	15	0.19	103	91.31	52	87.52	6	1.32	12	1.83	33	0.64										
Գեղարքունիք	15	0.89	2	0.38	8	0.45	5	0.06	167	26.96	26	13.15	4	0.99	68	6.20	69	6.62										
Լոռի	29	0.80	2	0.42	5	0.07	22	0.31	134	10.38	16	4.77	6	0.42	40	1.76	72	3.43										
Կոտայք	41	5.48	1	3.66	22	1.39	18	0.43	621	260.01	150	228.88	9	3.55	316	23.29	146	4.29										
Շիրակ	62	2.09	1	0.03	21	0.49	40	1.57	92	15.29	6	11.70	5	1.24	31	0.73	50	1.62										
Սյունիք	13	4.83	1	4.04	5	0.29	7	0.50	49	64.09	15	60.14	2	0.23	13	2.74	19	0.98										
Վայոց Ձոր	12	0.04	0	0.00	1	0.01	11	0.03	122	69.89	47	67.42	4	0.18	25	1.22	46	1.07										
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	140	27.73	22	16.56	12	1.22	49	6.42	57	3.53										
Ընդամենը	293	25.86	11	8.62	93	4.13	189	13.11	1933	895.01	513	792.27	72	13.17	693	55.65	655	33.92										

Հանրապետությունում 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 39 գործարքներ /63.69հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 24.8%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 3.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 27.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/

հողերի նկատմամբ նվազել է 33.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 18.2%-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ աճել է 1.4%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	74	99.12	27.0	1100.3	283.5	396	333.97	365.0	12000.0	3909.8
Ապարան	3	0.30	1218.2	2730.0	1854.0	39	38.90	86.5	2727.3	696.5
Թալին	17	39.39	37.7	156.0	58.2	147	973.13	93.6	5494.5	602.5
Ծաղկահովիտ						44	103.08	79.5	1000.0	241.9
Արարատի մարզ										
Արտաշատ	21	14.39	72.3	8505.1	2968.3	369	138.98	335.1	10833.3	2709.7
Մասիս	32	44.97	63.4	2997.5	289.2	212	201.61	200.0	11904.8	3061.3
Վեդի	32	103.96	16.2	1371.4	313.8	287	192.97	207.0	10795.1	1813.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	26	32.91	57.5	1059.3	337.7	437	509.35	294.3	9090.0	1541.4
Բաղրամյան	11	46.37	35.4	1595.0	426.2	103	582.84	90.6	2561.1	737.2
Վաղարշապատ	15	8.23	39.6	2013.1	673.0	246	220.08	444.4	11764.7	2695.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	7	4.40	66.0	374.5	153.5	885	289.71	199.8	1875.0	398.5
Ճամբարակ						38	25.42	60.5	953.3	335.9
Մարտունի	7	2.63	117.7	610.4	365.4	25	7.46	51.1	2850.0	727.0
Սևան	10	4.34	400.0	1221.0	810.5	17	12.78	52.2	2134.8	316.2
Վարդենիս	2	1.78	495.0	495.0	495.0	58	126.19	41.2	2575.1	381.7
Լոռու մարզ										
Ալավերդի	4	0.44	187.0	1095.7	727.6	47	21.57	170.4	6424.2	661.0
Գուգարք	4	0.72	212.2	1439.2	688.5	46	12.14	234.6	6065.9	758.1
Սպիտակ	3	0.57	650.0	6441.1	2115.3	25	9.82	250.0	5555.5	728.3
Ստեփանավան	5	3.04	483.0	1325.1	860.8	76	74.14	90.6	1686.6	296.5
Տաշիր						216	238.10	45.3	1384.4	142.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	66	113.63	17.4	8423.8	658.2	298	151.93	279.3	11942.7	4649.8
Եղվարդ	56	91.36	50.2	4721.8	696.2	412	334.05	174.4	11971.8	2785.8
Հրազդան	28	23.89	104.9	1000.0	472.7	150	78.53	130.5	10256.4	1871.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	3.45	259.4	336.0	306.7	102	91.20	252.0	1693.1	586.1
Ամասիա	1	5.85	124.6	124.6	124.6	7	12.06	40.9	261.0	128.5
Անի						85	91.86	110.6	546.9	370.8
Աշոցք						25	17.86	58.5	215.8	122.9
Արթիկ	2	2.40	140.3	6072.0	3106.1	47	38.81	79.4	1428.6	380.5
Սյունիքի մարզ										
Գորիս	3	4.98	59.4	1550.0	557.2	53	85.69	92.6	1023.2	694.3
Կապան	7	47.32	33.3	924.7	361.2	21	10.22	120.0	841.6	341.6
Մեղրի	2	1.28	242.2	472.2	357.4	17	5.65	193.0	3000.0	723.8
Սիսիան	3	6.55	75.0	135.0	115.0	86	141.73	46.3	1977.4	503.7
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	22	21.51	37.1	1600.0	249.0	69	56.38	125.0	10000.0	1872.1
Վայք	25	45.91	76.6	8505.0	1555.3	44	16.36	58.8	1430.7	607.1
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.03	500.0	500.0	500.0	20	4.30	213.3	3783.8	673.8
Իջևան	17	14.95	73.3	3960.0	794.8	33	23.34	267.5	9454.5	1231.2
Նոյեմբերյան	4	1.58	361.8	2684.4	1157.7	69	38.71	46.7	7368.4	841.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մուս վելա գույն	Միջին			Նվազագույն	Մուս վելա գույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	914.0	922.0	3547.7	2640.6	207	214206.6	130.7	22200.0	2572.4
Ապարան	2	4100.0	37.8	378.4	208.1	29	39829.0	124.1	609.6	372.3
Թային	1	235.0	90.0	90.0	90.0	17	41544.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						3	6370.0	60.0	214.3	86.6
Արարատի մարզ										
Արտաշատ	37	35175.3	97.6	5588.9	708.9	132	126365.9	173.9	7140.3	893.3
Մասիս	48	38881.4	118.0	3265.5	1374.9	260	182103.5	187.5	25000.0	1208.9
Վեդի	7	10813.0	44.3	1867.0	602.6	118	127553.9	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	3859.0	356.3	3463.6	1182.7	207	233483.6	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						12	14390.0	100.0	833.3	235.4
Վաղարշապատ	7	14405.0	48.0	6020.5	716.6	354	364499.9	197.4	26528.4	1527.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	13	14480.0	110.0	123.1	114.1	35	34980.0	186.6	1084.3	659.7
Ճամբարակ	1	80.0	250.0	250.0	250.0	7	8161.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	36	40711.4	119.1	244.2	209.0	113	139109.7	119.3	5000.0	278.9
Սևան	6	3039.3	118.5	484.5	382.6	12	18726.0	240.0	3110.4	304.8
Վարդենիս	12	3667.8	67.5	1150.0	726.3	14	26248.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի	6	253.1	609.5	1650.0	1071.5	14	15459.0	114.3	1388.9	216.0
Գուգարք	16	3519.7	224.4	5203.0	2677.3	81	72880.4	77.9	14083.3	1091.6
Սպիտակ	5	6701.5	115.2	607.5	245.2	80	109441.7	104.9	1348.3	204.7
Ստեփանավան	4	1245.0	553.7	554.4	554.3	14	15063.2	88.2	1666.7	175.5
Տաշիր	9	5934.0	148.3	722.0	391.2	4	2321.6	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	124	79668.6	264.0	5648.9	2839.8	408	311736.4	264.5	35353.5	1965.6
Եղվարդ	181	144642.1	229.2	6889.8	2574.7	350	308427.4	173.6	27000.0	2848.0
Հրազդան	11	8570.0	233.0	4750.0	1819.8	75	77111.4	117.7	34848.5	1320.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	20	5716.2	554.4	6666.7	2664.7	56	47870.3	113.6	18750.0	331.5
Ամասիա						1	1450.0	45.3	274.7	71.0
Անի	2	800.0	402.1	467.4	434.8	10	11742.0	67.9	180.6	159.5
Աշոցք								40.8	144.0	63.2
Արթիկ	9	734.0	253.0	5750.0	3736.1	25	22540.6	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	891.0	891.0	891.0	19	26406.6	112.2	1700.0	369.7
Կապան	8	4538.0	198.1	1787.1	970.8	54	39541.8	67.9	2638.9	298.1
Մեղրի	4	22278.3	269.4	670.5	480.4	7	5462.0	68.5	632.9	193.7
Սիսիան						9	7777.3	123.5	875.0	196.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	4036.7	244.4	1492.5	715.5	34	31731.0	96.7	7659.6	499.5
Վայք	14	8137.7	851.4	872.0	862.5	12	10819.4	120.7	1448.3	200.6
Տավուշի մարզ										
Բերդ						4	3667.0	75.8	810.0	110.8
Իջևան	38	58135.4	151.2	4800.0	2178.3	67	64968.3	74.1	14423.1	517.2
Նոյեմբերյան	11	6067.6	76.4	1656.0	851.1	12	11521.0	125.0	1948.1	221.4

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք 0.63 հա մակերեսով, Արագածոտնի մարզում:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8038 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 56.8%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 7.2%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 473 բնակարանների, 741 անհատական բնակելի տների, 3593 հասարակական, 874 արտադրական նշանակության օբյեկտների, 2095 միավոր /8374.17 հա/ հողերի, 243 ավտոտնակների և 19 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 190 վարձակալության գործարքների, այդ թվում 32 միավոր /4.31 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 69.6%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 8374.17 հա հողերից 14.94 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 8359.23 հա հողերի 410.27 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 24.38 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 3895.51 հա, որից 3874.12 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալվել են 7675.45 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 19741 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 15.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.1%/, առանձնատների /24.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.1%/ և հողերի /8.3%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 10372 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ նվազել է 3.1%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 5512.89 հա մակերեսով հողեր, որից 297.13 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 90.6%-ը կամ 4994.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 6.84 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 3616.92 հա, որից 3586.85 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1283 գործարքներ, որից 818-ը՝ Երևանում: Ընդ որում,

հիփոթեքային գրավադրման գործարքներից 81.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.1%-ն՝ անհատական բնակելի տների, 2.0%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.5%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.3%-ն՝ ավտոտնակների, 1.2%-ն՝ ամառանոցների և 1.3%-ն՝ հողերի նկատմամբ, որից 0.1%-ը՝ գյուցատնտեսական նշանակության: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 40.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 49.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 15.6%-ով:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 18760 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 34.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /32.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն